«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր

Հետազոտական աշխատանք

Թեմա՝

Ֆեյք նորությունների ազդեցությունը հասարակության վրա

Սովորող՝ Արփի Մկրտչյան

Դպրոց, դասարան՝ Ավագ դպրոց, 11–րդ դասարան

Ղեկավար՝ Տաթև Աբրահամյան

Գրախոս՝ Սոֆյա Մամյան

https://www.canva.com/design/DAGqoC0SO2A/PrskffdWFOlgkdS-FcJgkQ/view?utm_content=DAGqoC0SO2A&utm_campaign=designshare&utm_medium=link2&utm_source=uniquelinks&utlId=hc90d918a5d

Երևան **2025**

Բովանդակություն

Նախաբան
Արդիականություն
Հետազոտության նպատակ
Գլուխ 1. Ի՞նչ է կեղծ տեղեկատվությունը
Գլուխ 2. Ինչպե՞ս են տարածվում կեղծ տեղեկատվությունները և ինչ ազդեցություն են թողնում
Գլուխ 3. Կեղծ նորությունների տարածման դեմ պայքարի տարբեր մոդելներ աշխարհում
Գլուխ 4. Ինչպե՞ս տարբերել կեղծ տեղեկատվությունը
Եզրակացություն
Գրականության ցանկ

Ներածություն

Ժամանակակից տեղեկատվական դարաշրջանում մարդկության առջև ծառացած ամենամեծ մարտահրավերներից մեկն է կեղծ նորությունների տարածումը: Այն հասարակության մեջ կարող է առաջացնել շփոթություն, պառակտում և նույնիսկ վտանգել մարդկանց կյանքը: Երբ մարդիկ ստանում են ոչ ճշգրիտ, աղավաղված կամ միտումնավոր սխալ տեղեկատվություն, դա կարող է լուրջ հետևանքներ ունենալ թե՛ անհատական, թե՛ հասարակական մակարդակներում: Այս աշխատանքում կքննարկվեն այն հարցերը, թե ինչ է կեղծ տեղեկատվությունը, ինչպես է այն տարածվում, ինչ հետևանքներ կարող է ունենալ, ինչպես նաև ինչպես կարելի է տարբերել այն ճշգրիտ լուրերից:

Արդիականություն

Ֆեյք նորությունները լուրջ սպառնալիք են դարձել ժամանակակից հասարակության համար, հատկապես տեղեկատվության արագ տարածման պայմաններում: Դրանք խեղաթյուրում են իրականությունը, մոլորեցնում մարդկանց և կարող են վտանգել հանրային անվտանգությունը, առողջությունը և կայունությունը:

Հետազոտության նպատակն ու խնդիրները

Նպատակը.

Բացահայտել ֆեյք նորությունների ազդեցությունը հասարակության վրա և գնահատել դրանց տարածման հետևանքները հասարակական կյանքում:

Խնդիրները.

1. Հասկանալ, թե ինչպես են ձևավորվում և տարածվում ֆեյք նորությունները:
2. Ուսումնասիրել, թե ինչ ազդեցություն ունեն դրանք մարդկանց մտածողության և հասարակական գործընթացների վրա:
3. Պարզել, թե ինչ քայլեր կարող են օգնել դիմակայելու և կանխելու ապատեղեկատվությունը:

Գլուխ առաջին
Ի՞նչ է կեղծ տեղեկատվությունը

Այսօրվա թվային դարում, երբ տեղեկատվությունը հասանելի է ընդամենը մի քանի հպումով, չափազանց կարևոր է կարողանալ տարբերել ճշմարիտ տեղեկատվությունը կեղծից: Տեղեկատվության հոսքը այնքան մեծ է, որ շատ հաճախ մարդը չի հասցնում վերլուծել կամ ստուգել ստացած տվյալների իսկությունը: Կեղծ տեղեկատվությունը այն տեղեկատվությունն է, որի իրականությանը չի համապատասխանում և կարող է տարածվել երկու հիմնական ձևով՝ դիտավորյալ և ոչ դիտավորյալ: Եթե այն տարածվում է դիտավորյալ՝ մարդկանց մոլորեցնելու կամ հասարակության վրա ազդելու նպատակով, ապա այն կոչվում է դեզինֆորմացիա: Իսկ եթե տեղեկատվությունը սխալ է, բայց տարածվում է առանց հատուկ նպատակի, պարզապես մարդկանց կողմնակից լինելու կամ կարծիք հայտնելու հետևանքով, ապա այն համարվում է միսինֆորմացիա: Այս երկու տեսակները կարող են ունենալ միևնույն հետևանքները, սակայն դրանց արմատները տարբեր են: Կեղծ տեղեկատվությունը կարող է առաջանալ տարբեր ձևերով: Դրանք ներառում են սուտ կամ հորինված նորություններ, մանիպուլացված լուսանկարներ ու տեսանյութեր, խմբագրված փաստաթղթեր, համատեքստից կտրված կամ աղավաղված մեջբերումներ, ինչպես նաև ուղղակի հորինված պատմություններ, որոնք տարածվում են սոցիալական ցանցերում: Երբեմն կեղծ տեղեկատվությունը այդքան հավաստի է թվում, որ անգամ կրթված ու տեղեկացված մարդիկ կարող են մոլորության մեջ ընկնել: Մարդիկ հաճախ պարզապես կիսվում են այնպիսի բովանդակությամբ, որը հուզում է իրենց կամ համընկնում է իրենց տեսակետների հետ՝ առանց ստուգելու դրա իսկությունը:

Կեղծ տեղեկատվության տարածման հիմքում կարող են լինել տարբեր նպատակներ: Դրանցից մեկը քաղաքական շահն է, երբ ընտրությունների ժամանակ տարածվում են սուտ լուրեր քաղաքական գործիչների կամ կուսակցությունների մասին՝ մարդկանց կարծիքը ձևավորելու կամ փոխելու համար: Մյուսը ֆինանսական շահն է, երբ կայքերն ու բլոգները ստեղծում են սենսացիոն վերնագրերով և բովանդակությամբ կեղծ հոդվածներ, որոնք դիտումներ ապահովելով բերում են գովազդային եկամուտ: Որոշ դեպքերում նպատակն է հասարակության պառակտումը՝ ատելություն և անվստահություն սերմանելու միջոցով: Կեղծ տեղեկատվությունը կարող է վնասել ինչպես անհատների, այնպես էլ կազմակերպությունների ու ամբողջական պետությունների հեղինակությանը: Այն կարող է խուճապ առաջացնել հասարակության մեջ, խախտել մարդու իրավունքները, հարվածել առողջապահական համակարգին կամ ազգային անվտանգությանը: Օրինակ՝ համավարակի ժամանակ տարածված կեղծ լուրերն ազդեցին մարդկանց վարքի վրա՝ շատերը հրաժարվեցին պատվաստումից կամ չհետևեցին պաշտպանիչ միջոցներին՝ հիմք ընդունելով ապատեղեկատվությունը: Սա հանգեցրեց բազմաթիվ մահերի, առողջապահական համակարգի ծանրաբեռնման և հանրային վստահության կորստի: Կեղծ տեղեկատվությունը մոլորեցնող է, որովհետև այն հաճախ կառուցվում է իրական փաստերի և հորինվածքների խառնուրդով: Հաճախ այն փոխանցվում է էմոցիոնալ լեզվով՝ վախ առաջացնող, զայրույթ բորբոքող կամ զարմանք հարուցող: Այդ պատճառով կարևոր է զարգացնել մեդիագրագիտությունը: Դա այն կարողությունն է, որի շնորհիվ մարդը կարողանում է վերլուծել, համեմատել, քննադատաբար ընկալել տեղեկատվությունը, ստուգել աղբյուրները և տարբերել իրականն ու կեղծը: Կեղծ տեղեկատվության տարածման պայմաններում մարդիկ կանգնած են լուրջ մարտահրավերի առաջ՝ պահպանելու ճշմարտությունը: Սա հատկապես կարևոր է երիտասարդ սերնդի համար, ովքեր մեծանում են թվային միջավայրում և հաճախ իրենց կարծիքը ձևավորում են հենց համացանցում ստացած տեղեկությունների հիման վրա: Կեղծ տեղեկատվությունը չճանաչելու և անտեսելու հետևանքով ձևավորվում են մոլորեցնող պատկերացումներ աշխարհի և իրադարձությունների մասին: Հետևաբար՝ անհրաժեշտ է, որ կրթական համակարգը ևս նպաստի մեդիագրագիտության զարգացմանը՝ սովորեցնելով երեխաներին ու պատանիներին ճանաչել տեղեկատվության տեսակները, տարբերել աղբյուրները և ունենալ քննադատական մտածողություն: Եթե յուրաքանչյուրս սովորենք ստուգել տեղեկատվությունը, չենք շտապի կիսվել կասկածելի նյութերով և կսովորեցնենք նաև մեր շրջապատին նույնը անել, ապա կեղծ տեղեկատվության ազդեցությունը կթուլանա:

Գլուխ երկրորդ
Ինչպե՞ս են տարածվում կեղծ տեղեկատվությունները և ի՞նչ ազդեցություն են թողնում

Այսօր կեղծ տեղեկատվության տարածումը դարձել է լուրջ ու գլոբալ խնդիր: Մարդիկ, ովքեր տիրապետում են տեղեկատվական տեխնոլոգիաներին, կարող են առանց դժվարության ստեղծել և տարածել լուրեր, որոնք չունեն իրական հիմք, սակայն կարող են շատ արագ մեծ արձագանք ստանալ: Սոցիալական մեդիան, հատկապես, մեծապես նպաստում է կեղծ լուրերի տարածմանը, քանի որ այն թույլ է տալիս տարածել ցանկացած նյութ՝ առանց որևէ խմբագրական վերահսկողության: Օգտատերերը հաճախ չեն ստուգում տեղեկության ճշգրտությունը, առաջնորդվում են էմոցիաներով կամ հետաքրքիր վերնագրերով և տարածում են այն: Սրա հետևանքով հասարակությունը դառնում է ավելի խոցելի տեղեկատվական մանիպուլյացիայի նկատմամբ: Կեղծ տեղեկատվությունը հիմնականում տարածվում է մի քանի եղանակով: Առաջին հերթին, այն կարող է տարածվել սոցիալական մեդիայի օգտատերերի միջոցով, որոնք ինքնաբերաբար կամ միտումնավոր կիսվում են չստուգված լուրերով: Երբ մարդ տեսնում է մի նորություն, որը սենսացիոն է, էմոցիոնալ կամ խուճապ առաջացնող, նա հաճախ առանց երկար մտածելու տարածում է այն՝ հավատալով, որ լուրը ճշմարիտ է: Երկրորդը՝ կան ավտոմատացված համակարգեր կամ բոթեր, որոնք նախատեսված են կեղծ տեղեկատվության զանգվածային տարածման համար: Դրանք ծրագրավորվում են այնպես, որ միաժամանակ նույն նյութը տարածեն հազարավոր էջերում կամ խմբերում, ինչի հետևանքով ստեղծվում է «հանրային ճշմարտության» պատրանք: Երրորդը՝ որոշ լրատվամիջոցներ կարող են միտումնավոր տարածել կեղծ կամ աղավաղված տեղեկատվություն՝ իրենց շահերից ելնելով: Երբեմն սա արվում է քաղաքական նպատակներով, երբեմն՝ պարզապես մեծ դիտումներ ապահովելու համար:

Անհրաժեշտ է հասկանալ, որ կեղծ տեղեկատվությունը ոչ միայն տեղեկատվական խնդիր է, այլև ունի սոցիալական, հոգեբանական ու քաղաքական լուրջ հետևանքներ: Մեկ կեղծ լուր կարող է առաջացնել հսկայական հանրային խուճապ, օրինակ՝ երբ հրապարակվում են սուտ տեղեկություններ երկրաշարժի, համաճարակի կամ այլ աղետի մասին, մարդիկ կարող են սկսվել զանգվածային արձագանքներ՝ շտապել դեղատներ, խանութներ, տարածել խուճապը իրենց շրջապատում: Կեղծ լուրերը կարող են նաև լուրջ վնաս հասցնել անհատներին: Երբ որևէ մեկի վերաբերյալ տարածվում է սուտ տեղեկատվություն՝ դա կարող է վնասել նրա հեղինակությանը, մասնագիտական ու անձնական հարաբերություններին: Նույնիսկ եթե ապագայում պարզվում է, որ լուրը կեղծ է, վնասը արդեն հասցված է լինում, քանի որ մարդկանց հիշողության մեջ այդ տեղեկությունը մնում է որպես տպավորություն:

Բացի անհատներից, կեղծ տեղեկատվությունը կարող է վտանգել ամբողջ հասարակության անվտանգությունը: Շատ հաճախ կեղծ լուրերը

օգտագործվում են որպես քարոզչական գործիք՝ հասարակության տարբեր խմբերի միջև անվստահություն, հակասություն ու նույնիսկ թշնամանք սերմանելու համար: Օրինակ՝ երբ տարածվում են սուտ տեղեկություններ որևէ ազգային կամ կրոնական խմբի մասին, կարող են առաջանալ վեճեր, բախումներ կամ խտրական վերաբերմունք: Կեղծ տեղեկատվությունը հատկապես վտանգավոր է նախընտրական փուլերում, երբ այն կարող է ուղղակիորեն ազդել ընտրողների որոշումների վրա՝ խեղաթյուրելով իրականությունը: Այս ամենի արդյունքում կեղծ տեղեկատվությունը դառնում է ոչ միայն անհատական, այլև ազգային անվտանգության խնդիր:
Եզրափակելով կարելի է ասել, որ կեղծ տեղեկատվությունը համաշխարհային մարտահրավեր է, որը պահանջում է գիտակցված մոտեցում և համատեղ պայքար: Այն հասարակությունները, որոնք զարգացնում են մեդիագրագիտությունը, ունեն ավելի մեծ շանս լինել պաշտպանված տեղեկատվական վտանգներից: Իսկ մեզանից յուրաքանչյուրը կարող է լինել այդ պայքարի մի մասը՝ լինելով ավելի պատասխանատու, քննադատող և զգոն այն ամենի նկատմամբ, ինչ տեսնում, լսում և կիսվում է: Քանի որ ճշմարիտ տեղեկատվությունը այսօր ոչ միայն գիտելիքի, այլև անվտանգության, վստահության ու խաղաղության գրավականն է:

Գլուխ երրորդ
Ֆեյք նորությունների տարածման դեմ պայքարի տարբեր մոդելներ աշխարհում

Ֆեյք նորությունների տարածումը դարձել է գլոբալ խնդիր, որը պահանջում է տարբեր երկրներում տարբեր մոտեցումներ և լուծումներ: Բազմաթիվ պետություններ ստեղծել են յուրահատուկ մոդելներ՝ կեղծ տեղեկատվության դեմ պայքարելու համար, որ ուղղված են տեղեկատվության ճշգրտության ապահովմանը և հասարակության պաշտպանությանը:
Օրինակ՝
Հայաստանում կեղծ նորությունների դեմ պայքարը հիմնականում իրականացվում է վիրավորանքի և զրպարտության մասին օրենքների միջոցով: Թեև օրենքով չկա հատուկ սահմանում «կեղծ լուրերի» համար, այնուամենայնիվ, եթե տարածվող տեղեկությունը վնասում է մարդու պատիվը, արժանապատվությունը կամ հեղինակությունը, այն կարող է համարվել վիրավորանք կամ զրպարտություն, և դրա համար կարող են սահմանվել տուգանքներ:
Զրպարտության դեպքում քաղաքացիական օրենսգրքով կարող է նշանակվել դրամական փոխհատուցում՝ կախված պատճառված վնասի չափից: Դատարանները կարող են պարտավորեցնել մինչև 6 միլիոն դրամի

փոխհատուցում, որոշ դեպքերում նաև ավելի քիչ՝ սկսած 1 միլիոն դրամից:
2021 թվականին ընդունվեց օրենք, ըստ որի՝ հրապարակային ծանր վիրավորանքի համար կարող էր սահմանվել ոչ միայն խոշոր դրամական տուգանք (մինչև 3 միլիոն դրամ), այլև կարճաժամկետ ազատազրկում: Սա առաջացրեց մեծ քննադատություն՝ ինչպես լրագրողական համայնքի, այնպես էլ միջազգային կազմակերպությունների կողմից, քանի որ այդ փոփոխությունը դիտարկվեց որպես խոսքի ազատության սահմանափակում: Ի վերջո, 2022 թվականին այդ փոփոխությունը չեղարկվեց: Վիրավորանքն ու զրպարտությունը կրկին դուրս բերվեցին քրեական պատասխանատվության դաշտից: Այսօր Հայաստանում նման դեպքերում գործում է միայն քաղաքացիական կարգավորում՝ երբ դատարանն, ըստ անհրաժեշտության, կարող է նշանակել դրամական փոխհատուցում:
Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը 2019 թվականին ստորագրեց օրենք, որը նոր խիստ տուգանքներ է սահմանում ռուսների նկատմամբ, ովքեր տարածում են այն, ինչ կառավարությունը անվանում է «կեղծ լուրեր» կամ ցանկացած բան, որը ցույց է տալիս «բացահայտ անհարգալից վերաբերմունք» պետության նկատմամբ: Կառավարությունը կարող է արգելափակել այն կայքերը, որոնք չեն արձագանքում ոչ ճշգրիտ տեղեկատվությունը հեռացնելու պահանջներին: Անհատները կարող են տուգանվել 400,000 ռուբլով (մոտ 6,100 դոլար) առցանց կեղծ տեղեկատվություն տարածելու համար, որը կարող է առաջացնել «հասարակական կարգի զանգվածային խախտում»: Սակայն միջազգային իրավապաշտպան կազմակերպությունները բազմիցս բարձրաձայնել են, որ Ռուսաստանում այդ օրենքները հաճախ օգտագործվում են՝ լռեցնելու անկախ լրագրողներին, բլոգերներին ու ընդդիմադիրներին:
Չինաստանը ևս կիրառում է շատ խիստ վերահսկողություն առցանց բովանդակության և տեղեկատվության տարածման նկատմամբ: Երկիրը ունի աշխարհի ամենախիստ ինտերնետ գրաքննության համակարգը: Չինաստանում գործում են մի շարք օրենքներ, որոնցով պետական մարմինները կարող են արագորեն արգելափակել կամ ջնջել ցանկացած լուր կամ կայք, որը համարվում է կեղծ կամ հակապետական: Չինաստանում կեղծ նորությունների տարածումը համարվում է քրեական հանցագործություն, եթե այն խաթարում է հասարակական կարգը: Դրա համար կարող է սահմանվել մինչև 7 տարվա ազատազրկում: 2016-ի Կիբերանվտանգության օրենքը արգելում է նաև ինտերնետով տարածել կեղծ տեղեկություններ, որոնք վնասում են տնտեսական կամ սոցիալական կայունությանը: Օգտատերերը պարտավոր են գրանցվել իրական անուններով, իսկ տեղեկատվական ծառայությունների մատակարարները՝ ունենալ համապատասխան լիցենզիա:
ԱՄՆ-ում ֆեյք նորությունների դեմ պայքարը հիմնված է խոսքի ազատության պահպանման վրա, ուստի կառավարությունը չի կիրառում խիստ սահմանափակումներ: Պայքարը հիմնականում իրականացնում են սոցիալական մեդիայի հարթակները՝ նշելով կամ հեռացնելով ապատեղեկատվությունը: Գործում են նաև մեդիագրագիտության ծրագրեր՝ մարդկանց սովորեցնելու ինչպես տարբերել կեղծ լուրերը: Պետությունը հետևում է հատկապես ընտրական և հանրային կարևոր տեղեկատվության պաշտպանությանը:
Ֆրանսիայում կեղծ լուրեր տարածելը համարվում է օրենքի խախտում,

հատկապես եթե այդ լուրերը կարող են խուճապ առաջացնել հասարակության մեջ կամ վնասել երկրի անվտանգությանը: Ըստ «Մամուլի ազատության մասին» օրենքի՝ եթե ինչ-որ մեկը դիտավորյալ տարածում է կեղծ կամ շինծու տեղեկատվություն, նա կարող է տուգանվել մինչև 45 հազար եվրոյով: Իսկ եթե այդ լուրերը վտանգում են բանակի վիճակը կամ խանգարում են երկրի պաշտպանության աշխատանքներին, տուգանքը կարող է հասնել մինչև 135 հազար եվրոյի: Բացի դրանից, եթե որևէ մեկը վիրավորում կամ զրպարտում է մարդկանց՝ նրանց ազգության, սեռի կամ կրոնի պատճառով, կարող է պատժվել մինչև մեկ տարվա ազատազրկմամբ և 45 հազար եվրո տուգանքով:

Իսպանիայում կեղծ տեղեկությունների տարածումը քրեական պատասխանատվության ենթակա է՝ թե առանձին անձանց, թե նաև կազմակերպությունների համար: Այս ոլորտում պատիժների մասշտաբն ու տեսակը կախված են տարածման բնույթից՝ վտանգավորության աստիճանից և հետևանքներից: Եթե կեղծ հրապարակումը պարունակում է ատելության խոսք կամ ուղղված է կոնկրետ խմբերի, քրեական օրենսգրքով նախատեսվում է 6 ամիսից մինչև 2 տարի ազատազրկում, կամ 6–12 ամիս տուգանք :

Եթե անձնական տվյալներ կամ գաղտնիք են բացահայտվում կեղծ տեղեկության շրջանակներում, դա համարվում է «պայմանագրերի կամ գաղտնի տվյալների բացահայտում» և ենթարկվում 2–5 տարվա ազատազրկման, կախված դեպքից:

Եթե կեղծ լուրը հասցնում է անձի բարոյական վշտի կամ արժանապատվության խախտման աստիճանի (օրինակ՝ վիրավորանք կամ զրպարտություն), կիրառվում է մինչև 2 տարի ազատազրկում կամ տուգանք՝ 12–24 ամիս (կալանավորման դեպքում՝ մինչև 14 ամիս): Չհրապարակային զրպարտության դեպքում տուգանքը ներառում է մինչև 12,000 €:

Գերմանիայում 2017 թվականին ընդունեց մի օրենք, որը կոչվում է NetzDG: Այս օրենքը ստեղծվել է այն նպատակով, որ սոցիալական կայքերում, օրինակ՝ Ֆեյսբուքում կամ Թվիթերում, կասեցնեն կեղծ լուրերի, վիրավորանքների և վնասակար տեղեկությունների տարածումը: Եթե ինչ-որ մեկը հաղորդում է, որ հրապարակումը կեղծ է կամ վիրավորական, այդ կայքը պարտավոր է այն հեռացնել մեկ օրվա ընթացքում: Եթե դեպքը բարդ է, կարող են ուսումնասիրել մինչև 7 օր: Եթե այդ կայքերը չեն հեռացնում այդպիսի բովանդակությունը, ապա նրանք կարող են տուգանվել մինչև 50 միլիոն եվրոյով:

Գլուխ չորրորդ
Ինչպե՞ս տարբերել կեղծ տեղեկատվությունը

Ինտերնետում տեղեկատվության հավաստիությունը ստուգելու մի քանի եղանակ կա: Ես առաջարկում եմ ձեզ հետևյալ սխեման.

1. Ստուգել տեղեկատվության աղբյուրը,
2. Ստուգել տեղեկատվության հեղինակին,
3. Ստուգել տեղեկատվության հրապարակման ամսաթիվը,
4. Ստուգել տեղեկատվության բովանդակությունը,
5. Համեմատել տեղեկատվությունը այլ աղբյուրների հետ,

Ստուգել տեղեկատվության աղբյուրը. Երբ ինտերնետում կարդում եք որևէ նորություն կամ հոդված, կարևոր է հասկանալ, թե որտեղից է այն վերցված: Աղբյուրի վստահելիությունը մեծ ազդեցություն ունի տեղեկատվության ճշգրտության վրա: Պաշտոնական լրատվական կայքերը, գիտական հաստատությունները և պետական մարմինների կայքերը սովորաբար վստահելի են: Դոմենի տեսակը նույնպես կարող է հուշել՝ օրինակ .gov, .edu, .org վերջավորությամբ կայքերը սովորաբար ավելի հուսալի են: Եթե կայքն ունի «Մեր մասին» բաժին, կոնտակտային տվյալներ և նշված է խմբագրական կազմը, դա նույնպես վստահության նշան է: Ուշադրություն դարձրեք կայքի դիզայնին: Եթե այն անկանոն է, լի գովազդով կամ խախտված լեզվական կառուցվածքներով, արժե զգուշանալ: Նույնպես կարևոր է, որ կայքը հաճախակի թարմացվի և աշխատի հստակ աղբյուրների հիման վրա: Եթե հոդվածը վերցված է անհայտ բլոգից կամ ֆեյսբուքյան էջից՝ առանց հղման սկզբնական աղբյուրին, հավանական է՝ այն կեղծ է: Ուստի տեղեկատվությունը կարդալիս միշտ ուշադիր եղեք՝ որ կայքից եք այն ստանում:

Ստուգել տեղեկատվության հեղինակին. Հեղինակի անձը մեծ նշանակություն ունի տեղեկատվության վստահելիությունը գնահատելիս: Եթե հոդվածը ստորագրված չէ կամ նշված չէ, թե ով է այն գրել, կարող է կասկած առաջանալ: Կարևոր է փորձել պարզել՝ արդյոք հեղինակը մասնագիտացած է տվյալ ոլորտում: Կարող եք որոնել նրա անունը ինտերնետում՝ տեսնելու համար, թե ինչ այլ նյութեր է հրապարակել և ինչ փորձ ունի: Եթե հեղինակը հայտնի է որպես լրագրող, գիտնական կամ վերլուծաբան, ապա ավելի հավանական է, որ նյութը հավաստի է:

Ստուգել տեղեկատվության հրապարակման ամսաթիվը. Տեղեկատվության ժամկետը շատ կարևոր է, քանի որ հին լուրերը հաճախ կարող են մոլորեցնող լինել: Նույն իրադարձության մասին տեղեկատվությունը տարիներ անց կարող է կորցնել արդիականությունը կամ նույնիսկ փոխված լինել: Օրինակ՝ մի հոդված, որը գրվել է 2017 թվականին, այժմ կարող է այլևս չլինել ճշմարիտ կամ համապատասխան իրականությանը: Շատ դեպքերում կեղծ լուրեր տարածողները օգտագործում են հին հոդվածներ՝ ստեղծելով տպավորություն, թե դա այժմ է կատարվում: Եթե հոդվածը նոր չէ, պետք է նայել՝ արդյոք դրա թեման այժմ էլ վերաբերելի է: Հաճախ ինֆորմացիան կարող է հիմնված լինել նախկին իրադարձության վրա, որը ներկայումս վերանայվել է: Նկատեք՝ արդյոք կայքում նշված է տեղեկատվության վերջին թարմացման օրը: Եթե ամսաթիվը չի երևում, դա կարող է լինել մտահոգիչ ազդանշան: Ուստի յուրաքանչյուր նյութ կարդալիս նախ ստուգեք՝ երբ է այն հրապարակվել:

Ստուգել տեղեկատվության բովանդակությունը. Երբ տեսնում եք որևէ տեղեկատվություն, կարևոր է հասկանալ՝ այն ինչ նպատակով է գրվել: Փորձեք նկատել, արդյոք նյութը ներկայացված է հուզական լեզվով, ծայրահեղ վերնագրերով կամ սենսացիոն բառերով: Այդպիսի ոճը հաճախ օգտագործվում է մանիպուլացնելու համար: Ուշադրություն դարձրեք, թե տեղեկատվությունը հիմնված է փաստերի վրա, թե՝ կարծիքների: Ճշմարիտ տեղեկությունը սովորաբար ունի հղումներ, աղբյուրներ և ստուգելի տվյալներ: Եթե թվեր են օգտագործվում, արժե հարցնել՝ որտեղի՞ց են վերցված, համապա՞տասխանում են այլ վստահելի աղբյուրներին:

Համեմատել տեղեկատվությունը այլ աղբյուրների հետ. Ինֆորմացիան այլ աղբյուրների հետ համեմատելը թույլ է տալիս տեսնել տարբեր կարծիքներ կամ մեկնաբանություններ նույն իրադարձության կամ փաստի վերաբերյալ: Երբ կարդում ենք որևէ լուր, միշտ օգտակար է ստուգել, արդյոք նույն լուրը ներկայացված է այլ վստահելի աղբյուրներում: Եթե տեղեկատվությունը հակասում է կամ տարբերվում այլ աղբյուրներից, դա կարող է ցույց տալ դրա կեղծ կամ ոչ ամբողջական լինելը:
Ինֆորմացիան համեմատելու համար կարող ենք օգտագործել տարբեր գործիքներ ու աղբյուրներ, ինչպիսիք են՝

- որոնողական համակարգեր (օրինակ՝ Google, Yandex)
- նորությունների վերլուծական կայքեր
- հանրագիտարաններ ու ակադեմիական կայքեր

Սա **«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի պաշտոնական կայքն է** (**https://mskh.am/**), որի օրինակով կստուգենք տեղեկատվության վերլուծության հետևյալ կետերը, որը նշել էի ես:

Ստուգել տեղեկատվության աղբյուրը

- Կայքը պատկանում է **«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրին**՝ պետական կրթական հաստատություն է:
- Դոմեյնը .am է՝ ինչը հայկական բարձր մակարդակի ազգային տիրույթ է:

Ստուգել տեղեկատվության հեղինակին

- Հեղինակների անունները նշվում են միայն որոշ հրապարակումներում, հիմնականում բլոգներում և նախագծային բաժիններում:

- Բազմաթիվ նյութերում հեղինակի անունը բացակայում է, ինչը նվազեցնում է տեղեկատվության թափանցիկությունը:

- Չնայած դրան, կայքը պատկանում է պետական հաստատությանը, ինչը բարձրացնում է նրա վստահելիությունը:

- Տեղեկատվությունը ներկայացվում է կազմակերպության անունից, ոչ անհատից:

Ստուգել տեղեկատվության հրապարակման ամսաթիվը

- Բոլոր հիմնական նորությունները, ծրագրերը և հաղորդագրությունները ունեն հստակ ամսաթվեր, և կայքը պարբերաբար թարմացվում է:

Ստուգել տեղեկատվության բովանդակությունը

- Բովանդակությունը կրթական է՝ ներառում է ճամբարներ, նախագծեր, ուսումնական գործընթաց, դպրոցական կյանք:

- Տեղեկատվությունը չի պարունակում կասկածելի, սենսացիոն կամ մանիպուլատիվ նյութեր:

Համեմատել տեղեկատվությունը այլ աղբյուրների հետ

- Կայքի նյութերը համընկնում են պետական կայքերում հրապարակված տեղեկությունների հետ, մասնավորապես՝ ԿԳՄՍ նախարարության պաշտոնական աղբյուրներում:

Եզրակացություն՝ mskh.am-ը համարվում է վստահելի, անվտանգ և օգտակար տեղեկատվական աղբյուր՝ կրթական ոլորտում:

Եզրակացություն

Կեղծ տեղեկատվությունը՝ մեր ժամանակների ամենահաճախ հանդիպող, բայց ամենավտանգավոր սպառնալիքներից է: Այն մոլորեցնում է մարդկանց, բևեռացնում հասարակությունը և խաթարում վստահությունը: Թեպետ աշխարհում ներդրվում են տարբեր պայքարի մեխանիզմներ, սակայն առանց յուրաքանչյուրիս անձնական պատասխանատվության այս խնդիրը հնարավոր չէ լիարժեք հաղթահարել: Այդ պատճառով ձեզ հորդորում եմ՝ լինել ուշադիր, քննադատական մտածողություն ունեցող և պատասխանատու: Չվստահել և չտարածել յուրաքանչյուր տեղեկություն առանց ստուգման: Վերլուծական հայացքով մոտենալ՝ պարզել որտեղից է տեղեկությունը, ինչ նպատակ ունի և արժե՞ դրան հավատալ: Հիշիր՝ ճշմարտությունը պաշտպանելու ուժը սկսվում է հենց քեզանից:

Գրականության ցանկ

Борьба с «фейковыми новостями». Как это работает в ряде стран мира

https://misinforeview.hks.harvard.edu/article/wheres-the-fake-news-at-european-news-consumers-perceptions-of-misinformation-across-information-sources-and-topics/

Дезинформация: как распознать ложь и защитить себя | Корпоративный университет Правительства НСО | Дзен

Initiatives to Counter Fake News in Selected Countries

Как проверить правдивость информации в интернете: основы фактчекинга для карьерного и личностного роста - BrainApps.ru

https://www.csmonitor.com/Technology/2017/0206/In-France-social-media-and-news-organizations-partner-to-battle-fake-news

Борьба с фейками во Франции: обучение и наказание

https://www.legifrance.gouv.fr/loda/article_lc/LEGIARTI000006419726

https://www.icab.es/export/sites/icab/.galleries/documents-noticies/tratamiento-penal-de-las-fake-news-fiscalia-general-del-estado.pdf

https://en.wikipedia.org/wiki/Network_Enforcement_Act

https://foi.am/articles/2892

https://www.canva.com/design/DAGqoC0SO2A/PrskffdWFOlgkdS-FcJgkQ/view?utm_content=DAGqoC0SO2A&utm_campaign=designshare&utm_medium=link2&utm_source=uniquelinks&utlId=hc90d918a5d